ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8

Մանկավարժական խորհրդի նիստի

2026թ-ի ապրիլի 30-ին կայացել է մանկավարժական խորհրդի նիստ:
Նիստին բացակա էին մանկավարժական խորհրդի 4 (չորս) անդամ

Օրակարգում՝

1. Մանկավարժական խորհրդի 2026 թվականի ապրիլի 30-ի նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
2. Մանկավարժական խորհրդի նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների վերաբերյալ զեկուցում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
3. 2025-2026 ուսումնական տարվա ՈՒԴԱՏՊ-ով մարտ և ապրիլ ամիսների համար նախատեսված գործողությունների կատարման մասին զեկուցում, այդ թվում դասալսումների, միջոցառումների արդյունքներ (զեկուցող՝ Ա. Գարեգինյան, ՄՄ նախագահներ)
4. Սովորողների հաճախումների մշտադիտարկման արդյունքներ, տարեկան 200 ժամից ավելի բացակայած սովորողների քննությունների կազմակերպման հարց (զեկուցող՝ Լ. Մանվելյան, Ա. Գարեգինյան)
5. Ավարտական դասարանում Վերջին դասի պլանավորում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
6. ԱՈՒՊ-ների ամփոփման շուրջ իրականացվող նախնական աշխատանքներ (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
7. Աշխատանքների պլանավորման և իրականացման արդյունավետ մեխանիզմների գործարկման տարբերակներ (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
8. Այլ հարցեր

Լսեցին՝

1. **Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատման մասին հաղորդումը (զեկուցող՝ Ա. Գարեգինյան):**

Տնօրենի ժ/Պ Ա. Գարեգինյանը ներկայացրեց մանկավարժական խորհրդի 2026 թվականի ապրիլի 30-ի նիստի օրակարգը՝ բաղկացած 8 հարցից:

Լսեցին՝

2. **Մանկավարժական խորհրդի նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների վերաբերյալ զեկուցում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան):**

Ա. Գարեգինյանը զեկուցեց նախորդ նիստի որոշումների կատարման մասին՝ նշելով, որ

.

- ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից ներկայացվել են պարզաբանումները՝ «Այլընտրանքային հաղորդակցում» առարկայի շրջանակում գնահատման դժվարությունների և էսսեագրության կիրառման հարցերի վերաբերյալ: Նշվեց, որ հիմնադրամն առաջարկել է դպրոցի

մասնագետների կողմից մշակել և իրենց ներկայացնել «Այլընտրանքային հաղորդակցում» առարկայի բնութագրիչների ամբողջական փաթեթը՝ նախնական դիտարկման համար, որը հետագայում կներկայացվի ԿԳՄՍ նախարարության հաստատմանը և կներառվի ԴԿՏՀ համակարգում: Էսսեագրության կիրառման մասով պարզաբանվել է, որ այն մեր դպրոցի դեպքում ուսումնական գործընթացում պարտադիր չէ կիրառել՝ հաշվի առնելով սովորողների առանձնահատկությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ սովորողները պետական ավարտական քննություններից ազատվում են սահմանված կարգով՝ ծնողների դիմումների հիման վրա, ինչի արդյունքում էսսեագրության հետ կապված խնդիրներ չեն առաջանում:

- «Անվտանգ և ապահով կրթության տարի» խորագրի շրջանակում նախատեսվող միջոցառումների պլանավորվել են, դրանցից մեկը՝ «Բնական աղետներ՝ երկրաշարժ» թեմայով իրականացվել է ապրիլին, իսկ մյուսը՝ «Անվտանգ ամառային արձակուրդներ» թեմայով իրականացվելու է մայիսին:

Լսեցին՝

3. **2025-2026 ուսումնական տարվա ՈՒԴԱՏՊ-ով մարտ և ապրիլ ամիսների համար նախատեսված գործողությունների կատարման մասին զեկուցում, այդ թվում դասալսումների, միջոցառումների արդյունքներ (զեկուցող՝ Ա. Գարեգինյան, ՄՄ նախագահներ)**

Ա. Գարեգինյանը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ՈՒԴԱՏՊ-ով մարտ և ապրիլ ամիսների համար նախատեսված գործողությունների կատարման վերաբերյալ զեկույցը՝ ներառյալ դասալսումների, մշտադիտարկումների, միջոցառումների և մասնախմբային աշխատանքների արդյունքները:

Նշվեց, որ հաշվետու ժամանակահատվածում բոլոր պլանավորված միջոցառումները, բաց դասերը, էքսկուրսիաները և այլ նախաձեռնությունները կազմակերպվել և իրականացվել են պատշաճ կերպով՝ ունենալով հստակ կրթադաստիարակչական նպատակներ: Արձանագրվել է, որ դրանք եղել են ուսուցողական, հետաքրքիր և նպաստել են սովորողների ակտիվ ներգրավվածությանը, սոցիալականացմանը և կարողունակությունների զարգացմանը:

Դասալսումների և դիտարկումների արդյունքների վերաբերյալ Ա. Գարեգինյանը նշվեց, որ ուսումնական գործընթացում առկա են ինչպես դրական զարգացումներ, այնպես էլ մեթոդական և կազմակերպչական բնույթի խնդիրներ: Արձանագրվել են սովորողների առանձնահատկություններին զգայուն և անհատական մոտեցման, համագործակցային աշխատանքի և տեսողական միջոցների կիրառման արդյունավետ օրինակներ: Միաժամանակ նկատվել է դասի պլանավորման, նպատակների և վերջնարդյունքների հստակեցման, ժամանակի կառավարման, տարբերակված ուսուցման և ԱՈՒՊ-ներով սահմանված նպատակներին համապատասխանության ուղղությամբ բացթողումներ և դժվարություններ, որոնք հաղթահարելու համար անհրաժեշտ է շարունակական աշխատանք:

Մասնախմբերի ղեկավարները զեկուցելով իրենց կողմից իրականացված դասալսումների արդյունքներից նշեցին, որ ուսուցիչները հիմնականում ուսուցիչները աշխատել են դասի պլաններին համապատասխան, կիրառել ակտիվ և համագործակցային մեթոդներ, օգտագործել

ցուցադրական նյութեր և իրականացրել սովորողների կարիքներին համապատասխան խելամիտ հարմարեցումներ: Նշվեց նաև, որ դասերի բովանդակությունը մեծ մասամբ համապատասխանել է ԱՈՒՊ-ներով սահմանված նպատակներին, իսկ ուսուցման գործընթացում կիրառվել են տարբերակված մոտեցումներ՝ միտված սովորողների կարողունակությունների զարգացմանը և ուսումնական նյութի հասանելիության ապահովմանը:

Քննարկվեց, որ տնօրինության և մասնախմբերի ղեկավարների կողմից իրականացված դասալսումների վերլուծությունների համադրման արդյունքում որոշ դեպքերում արձանագրվում են գնահատականների և եզրահանգումների անհամապատասխանություններ: Նշվածը վկայում է գնահատման չափանիշների, մոտեցումների և վերլուծական գործիքների միասնականացման և համադրելիության ապահովման անհրաժեշտության մասին՝ համապատասխան հստակեցնող գործողությունների իրականացման նպատակով:

Լսեցին՝

4. **Սովորողների հաճախումների մշտադիտարկման արդյունքներ, տարեկան 200 ժամից ավելի բացակայած սովորողների քննությունների կազմակերպման հարց (զեկուցող՝ Լ. Մանվելյան, Ա. Գարեգինյան)**

Լ. Մանվելյանը ներկայացրեց սովորողների հաճախումների և բացակայությունների վերաբերյալ տվյալներ: Նա նշեց, որ 200 ժամից ավել բացակայություն ունեն Ավդալյան Դավիթը (4-րդ Բ դասարան) և Սահակյան Էլինանան (4-րդ Գ դասարան): Լ. Մանվելյանը հիշեցրեց դասղեկներին, որ պետք է հետևողականություն ցուցաբերեն սովորողների բացակայությունների հաշվառման նկատմամբ՝ պարբերաբար ամփոփելով առկա բացակաների քանակը մինչև ուսումնական տարվա ավարտը, նպատակ ունենալով պարզել 200 ժամը գերազանցող այլ սովորողների առկայությունը:

Ա. Գարեգինյանը հայտնեց, որ 1-8-րդ դասարաններում տարեկան 200 ժամից ավելի բացակայած սովորողը հանձնում է լրացուցիչ քննություններ ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներից՝ գրավոր: Սովորողի փոխադրման հարցը որոշվում է օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում՝ նրա հանձնած լրացուցիչ քննությունների կամ վերաքննությունների արդյունքներով: Լրացուցիչ քննությունների արդյունքները լրացվում են որպես կիսամյակային և տարեկան գնահատականներ այն դասարաններում, որտեղ կիրառվում է միավորային գնահատում: Այն դասարաններում, որտեղ միավորային գնահատում չի կիրառվում, վերաքննությունների արդյունքները ներառվում են սովորողի կիսամյակային և տարեկան բնութագրերում: Սահմանված ժամկետներում վերաքննություններին չներկայանալու կամ միավորային գնահատմամբ դասարաններում վերաքննության արդյունքում առնվազն երկու առարկայից 1-7 (գնահատման 20-միավորային սանդղակից) միավոր գնահատված լինելու դեպքում սովորողը կրկնում է տվյալ տարվա դասընթացը:

Լսեցին՝

5. **Ավարտական դասարանում Վերջին դասի պլանավորում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Ա. Գարեգինյանը անդրադարձավ Վերջին դասի կազմակերպման ընթացքին: Նշեց, որ արդեն քննարկումներ է իրականացրել միջոցառման պատասխանատուների հետ, որոնց ներկայացված առաջարկություններ միջոցառման ընթացքի և բովանդակության վերաբերյալ եղել են ընդունելի: Առաջարկվել է միջոցառումը կազմակերպել հանդիսավոր մթնոլորտում՝ որպես մասնակից ներգրավելով 9-րդ դասարանի բոլոր սովորողներին և տվյալ դասարանում դասավանդող ուսուցիչներին:

Լսեցին՝

6. **ԱՈՒՊ-ների ամփոփման շուրջ իրականացվող աշխատանքներ (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Ա. Գարեգինյանը առաջարկեց ուսումնական տարվա ավարտին և ԱՈՒՊ-ների ամփոփմանն ընդառաջ իրականացնել սովորողների ԱՈՒՊ-ների վերլուծություն՝ անդրադառնալով արձանագրված ձեռքբերումներին և առկա բացթողումներին, ինչպես նաև նախապես սահմանված նպատակների իրականացման աստիճանին՝ ապահովելով պատրաստվածություն ԱՈՒՊ-ների տարեվերջյան ամփոփման գործընթացին:

Լսեցին՝

7. **Աշխատանքների պլանավորման և իրականացման արդյունավետ մեխանիզմների գործարկման տարբերակներ (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Ա. Գարեգինյանը նշեց, որ մանկավարժների շրջանում առկա են դժվարություններ՝ կապված պլանավորման և հաշվետվողականության գործընթացների հետ, ինչպես նաև որոշ դեպքերում դասի պլանների առկայության պարագայում չի ապահովվում դրանց լիարժեք և արդյունավետ իրականացում: Ընդգծվեց, որ անհրաժեշտ է հաջորդ ուսումնական տարում վերանայել և պարտադիր դարձնել բոլոր ուսուցիչների կողմից դասի պլանների պատշաճ մշակումը և կիրառումը:

Քննարկվեց նաև միջոցառումների պլանավորման գործընթացի հստակեցման անհրաժեշտությունը. արձանագրվեց, որ հաճախ միջոցառումները իրականացվում են առանց հստակ նպատակների և ակնկալվող արդյունքների ձևակերպման, ինչի արդյունքում նվազում է դրանց արդյունավետությունը: Այդ նպատակով տնօրինության, տնօրենի տեղակալի և ԿԱԴԱՀ-ի կողմից մշակվել է միջոցառումների պլանավորման միասնական ձևաթուղթ, որի կիրառումը պարտադիր կլինի՝ նախքան միջոցառման հաստատումը:

Միաժամանակ ընդգծվեց դասղեկների աշխատանքների արդյունավետության մշտադիտարկման անհրաժեշտությունը, և որոշվեց մայիս ամսին իրականացնել համապատասխան ուսումնասիրություն՝ անկախ ՆԴՎ-ով նախապես պլանավորված չլինելու հանգամանքից:

Լսեցին՝

8. **Այլ հարցեր**

Այլ հարցեր քննարկելու առաջարկություններ չեն եղել:

Լսելով 2026 թվականի ապրիլի 30-ի մանկավարժական խորհրդի նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ զեկուցումները և քննարկելով ներկայացված հարցերը՝ մանկավարժական խորհուրդը

Որոշում է

1. Հաստատել մանկավարժական խորհրդի 30.04.2026 թվականի նիստի օրակարգը:
2. Ի գիտություն ընդունել մանկավարժական խորհրդի նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների վերաբերյալ զեկույցը՝ արձանագրելով որ ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից ներկայացված պարզաբանումները՝ «Այլընտրանքային հաղորդակցում» առարկայի գնահատման և էսսեագրության կիրառման վերաբերյալ եղել են թիրախային
3. Առաջնորդվելով ԿԶՆԱԿ հիմնադրամի խորհրդով՝ մեկնարկել աշխատանքները «Այլընտրանքային հաղորդակցում» առարկայի բնութագրիչների մշակման ուղղությամբ՝ դրանք նախնական դիտարկման ներկայացնելու նպատակով:
4. Հիմք ընդունելով դասալսումների արդյունքների վերաբերյալ վերլուծությունները տնօրենի տեղակալին հանձնարարել.
   - Կազմակերպել և համակարգել դասի պլանավորման գործընթացի ներդրումը 2026-2027 ուսումնական տարում՝ ապահովելով, որ բոլոր առարկայական ուսուցիչները յուրաքանչյուր դասի համար ունենան նախապես մշակված դասի պլաններ:
   - Մշակել կամ հստակեցնել միասնական դասի պլանի ձևաչափ (ձևաթուղթ)՝ ապահովելով դրա համապատասխանությունը դպրոցի սովորողների առանձնահատկություններին և ԱՈՒՊ-ների պահանջներին:
   - Իրականացնել պարբերական վերահսկողություն դասի պլանների առկայության և որակի նկատմամբ՝ կազմակերպելով դրանց ընտրանքային ուսումնասիրություն:
   - Կազմակերպել մեթոդական աջակցություն ուսուցիչներին՝ դասի պլանավորման, նպատակների ձևակերպման և մեթոդների ընտրության ուղղությամբ (խորհրդատվություններ, աշխատանքային հանդիպումներ):
   - Ապահովել ուսուցիչ-դաստիարակ համատեղ պլանավորման և համագործակցության կազմակերպումը՝ սահմանելով հստակ մեխանիզմներ:
5. Հիմք ընդունելով դասալսումների արդյունքների վերաբերյալ վերլուծությունները առարկայական մեթոդական միավորումների ղեկավարներին հանձնարարել
   - Կազմակերպել մեթոդական միավորման շրջանակներում դասի պլանավորման մշակույթի ձևավորում և զարգացում՝ ապահովելով բոլոր ուսուցիչների ակտիվ ներգրավվածությունը:
   - Հունիսին մշակել և ներկայացնել օրինակելի դասի պլաններ՝ տարբեր թեմաների համար:
   - Խթանել փոխադարձ դասալսումները և քննարկումները՝ դասի պլանավորման և իրականացման փորձի փոխանակման նպատակով:

- Ապահովել դասի պլանների համապատասխանությունը ԱՈՒՊ-ներով սահմանված նպատակներին՝ անհրաժեշտության դեպքում առաջարկելով ճշգրտումներ:
- Վերհանել առկա մեթոդական խնդիրները և ներկայացնել դրանք տնօրենի տեղակալին՝ լուծման ուղիների մշակման համար:
- Խթանել ուսուցման մեթոդների բազմազան կիրառությունը և արդյունավետ փորձի տարածումը մեթոդական միավորման ներսում:

6. Հանձնարարել դասղեկներին ապահովել սովորողների հաճախումների և բացակայությունների շարունակական և հետևողական հաշվառում՝ պարբերաբար ամփոփելով բացակայությունների քանակը և ներկայացնելով վերջնական տվյալները մայիսի 22-ին՝ 200 ժամից ավելի բացակայություն ունեցող սովորողների բացահայտման նպատակով:
7. Հավանություն տալ «Վերջին դաս» միջոցառման կազմակերպման ներկայացված առաջարկությանը՝ այն անցկացնել հանդիսավոր մթնոլորտում, ապահովելով 9-րդ դասարանի բոլոր սովորողների և տվյալ դասարանում դասավանդող ուսուցիչների ակտիվ մասնակցությունը: Նշված միջոցառման բովանդակության ու ընթացքի վերաբերյալ հետագա փոփոխություններն իրականացնել պատասխանատուների հետ նախապես համաձայնեցված առաջարկությունների հիման վրա:
8. Ուսումնական տարվա ավարտին և ԱՈՒՊ-ների ամփոփման գործընթացին նախապատրաստվելու նպատակով իրականացնել սովորողների ԱՈՒՊ-ների վերլուծություն՝ անդրադառնալով արձանագրված ձեռքբերումներին, առկա բացթողումներին և նախապես սահմանված նպատակների իրականացման աստիճանին՝ ապահովելով ԱՈՒՊ-ների տարեվերջյան ամփոփման արդյունավետ կազմակերպումը:
9. Հաջորդ ուսումնական տարվանից պարտադիր ապահովել բոլոր ուսուցիչների կողմից դասի պլանների պատշաճ և ամբողջական մշակումը՝ յուրաքանչյուր դասաժամի համար:
10. Միջոցառումների պլանավորման և իրականացման գործընթացն իրականացնել միայն տնօրինության, տնօրենի տեղակալի և ԿԱԴԱՀ-ի կողմից համատեղ մշակված միջոցառումների պլանավորման ձևաթղթի լրացման և հաստատման հիման վրա:
11. 2025 թվականի մայիս ամսին իրականացնել դասղեկների աշխատանքների արդյունավետության մշտադիտարկում՝ գնահատելով իրականացվող աշխատանքների որակը և կազմակերպման մակարդակը:

Մանկավարժական խորհրդի նախագահ՝ **Ա. Գարեգինյան**

Մանկավարժական խորհրդի քարտուղար՝ **Ա. Անդրեասյան**

07.05.2026